ARAM KALANTARIAN. Dvin, Histoire et Archeologie de la ville Medievale. *Paris, 1996, 191 p., 115 pl., bibliogr. 173-189.*

Հայագիտության մեծ երախտավոր Կ. Գ. Ղաֆադարյանը երկհատոր մի ուսումնասիրությամբ[1] հիմք դրեց միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից մեկի՝ Դվինի գիտական հետազոտությանը:

Գրախոսվող աշխատությունը, ժամանակի բերումով կուտակված նյութերի լայն ընդգրկումով, իրավամբ, կարելի է համարել վերոհիշյալ ուսումնասիրության տրամաբանական շարունակությունը: Աշխատության աղբյուրագիտական հենքը հնագիտական պեղումների և մատենագրական աղբյուրների շաղկապն է, որն, ըստ ամենայնի, լուսաբանում է ոչ միայն քաղաքի, այլև հայ ժողովրդի պատմության շատ աղոտ ու քիչ հետազոտված խնդիրները: Բազմաշերտ ու բարդ հուշարձան լինելու հանգամանք, Դվինը հետազոտողից պահանջում է ոչ միայն հնագիտական լուրջ գիտելիքների տիրապետում, այլև պատմաբանի հմուտ մոտեցում: Իրողությանը քաջատեղյակ հեղինակը, իր ձեռքի տակ եղած նյութը, վեր է ածել խոսուն և վստահելի պատմական աղբյուրի: Այս նպատակամղվածությամբ, նա գիտական աշխարհին է մատուցել միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից մեկի՝ Դվինի կյանքի բոլոր կողմերը՝ ճարտարապետությունը, շերտագրությունը, դրամաշրջանառությունը և շատ այլ խնդիրներ շոշափող մի արժեքավոր աշխատություն:

Չնայած նյութերով խիստ հագեցված լինելուն, մենագրության կառուցվածքը, միաժամանակ, հստակ է: Բուն աշխատանքը բաղկացած է ներածությունից, ութ գլուխներից, ունի եզրակացությունների հավելված, ընդարձակ մատենագիտություն և հայերեն հակիրճ ամփոփում: Հարուստ լուսանկարներով ձևավորված աղյուսակների, բարձր մակարդակով մշակված գծագրերի շնորհիվ շարադրանքը բավականին դյուրընկալելի է:

Ներածության (էջ 6–11) մեջ Ա. Քալանթարյանը ներկայացնում է անցյալում Ն. Մառի արշավախմբի կատարած աշխատանքները և այդ ֆոնի վրա հաջորդաբար բնութագրում Դվինի մասին հրապարակային ուսումնասիրությունները: Աստիճանաբար անցնելով քաղաքի հիմնադրման աղբյուրագիտական և առանցքային տեսակետներին (Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի), նա ընթերցողին հասու է դարձնում նաև Դվին այցելած ճանապարհորդների ուղեգրություններին, որոնցում կարևոր դիտողություններ կան քաղաքի տեղադրության մասին:

Արժեքավորելով Դվինի պատմամշակութային կյանքին նվիրված աշխատությունների ցանկը, գիտականը ուշադրություն է հրավիրում հատկապես 1973 թ. սկսած Դվինի տարբեր պեղահատվածներում (միջնաբերդ, կենտրոնական թաղամաս) ծավալված հնագիտական պեղումներին, որոնց արդյունքների պատկառելի բաժինը տվյալ աշխատության հանգամանալից քննության առարկան է:

Ա. Քալանթարյանի ուսումնասիրության ուշագրավ բաժիններից մեկն ամփոփում է Դվինի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը (էջ 55–87): Փաստացի նյութի լայն ընդգրկում ունեցող այս գլխում հոգևոր և աշխարհիկ շինությունները նկարագրված են պատմական այս կամ այն իրադարձության օրինաչափության սահմաններում: Հիմնավորված են նաև ժամանակային առումով յուրաքանչյուրի կրած հատակագծային փոփոխությունները:

---

1 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները. հ. 1, Երևան, 1952, հ. 2, Երևան, 1981:

Պետք է ասել, որ այս բաժնում քննարկված խնդիրների զգալի մասը նոր չէ: Հուշարձանի 1937–39, 1946–50 թթ. պեղումների ընձեռած հնարավորությունների շնորհիվ հրապարակում կան քաղաքի մասնավորապես հոգևոր շինություններին նվիրված մի շարք ուշագրավ աշխատանքներ (Վ. Հարությունյան, Ն. Տոկարսկի, Ա. Մնացականյան և այլք): Ա. Քալանթարյանը այդ ուսումնասիրությունները արժեքավորել է, բայց միաժամանակ կարողացել է նոր տվյալներով բարեխիղճ ճշգրտումներ կատարել ու մեկնաբանել այս կամ այն շինության վերանորոգման կամ հայոց եկեղեցու կանոններին համապատասխան նորը կառուցելու գրգռապատճառները: Առաջին հերթին խոսքը մասնավորեցնենք գրքում տեղ գտած V դարի կաթողիկոսական պալատի պատմական անցյալին, տեղադրությանը և ճարտարապետական մանրամասների վերաբերյալ եղած տվյալներին: Այստեղ կարևորվում է հեղինակի առաջ քաշած նոր տեսակետը, որի հիմնավորման աղբյուրագիտական ատաղձը Կաթողիկե եկեղեցու հարավարևմտյան հատվածում 1970 թ. ի վեր տարվող պեղումների արդյունքներն են: Տեղում բացված հսկայածավալ շինության հատակագծային առանձնահատկությունների մանրակրկիտ քննությունը հաստատուն պատասխան տվեց մինչ այդ տիրող իրարամերժ վարկածներին: Ա. Քալանթարյանը կարողացավ ապացուցել, որ Ս. Գրիգոր տաճարի հարավարևմտյան մասում սյունազարդ մեծ դահլիճով, հյուսիսային և հարավային կողմերում ընդարձակ սենյակներով օժտված շինության ավերակները V դարում Դվինում կառուցված կաթողիկոսական առաջին պալատինն են (գծ. 18, 19):

Պատմական դեպքերի հաջորդական ընթացքը, հեղինակը ներկայացնում է հայ պատմիչների արժանահավատ տեղեկություններով: Ըստ այդմ, պարսիկ մարզպան Սուրենի իշխանության օրոք (564–72) կրոնական հալածանքներից խիստ տուժած քաղաքի բնակչությունը 572 թ. Վարդան Մամիկոնյանի (կրտսեր) ղեկավարությամբ հրդեհի մատնեց մինչ այդ պաշտոնական նստոցի ու մեհյանի վերածված կաթողիկոսական պալատը:

Տեղին ենք համարում նշել, որ միայն Դվինի կաթողիկոսական առաջին պալատի հայտնաբերումը և զուգընթաց պատմական դեպքերի մեկնաբանությունը բավարար են այս աշխատության բարձր արժանիքներից առնվազն մեկի մասին խոսելու համար:

VII դարում Կաթողիկե եկեղեցուց հյուսիս ընկած տարածքում կառուցվեց Դվինի կաթողիկոսական երկրորդ պալատը: Շինարարության համար այդ վայրն ընտրելու հանգամանքը հեղինակն իրավացիորեն պատճառաբանում է հայոց եկեղեցու կողմից ընդունված կանոնիկ այն սկզբունքով, որ միանգամայն մերժելի էր սրբապղծված հոգևոր շինության վերանորոգումը:

1987 թ., պեղումների հիսնամյա ընդմիջումից հետո, կաթողիկոսական երկրորդ պալատի մաքրման աշխատանքների շնորհիվ ակնհայտ դարձավ պատմական տարբեր ժամանակահատվածներում (IX և X դարերում, էջ 76–77) շինության կրած հատակագծային ձևափոխությունների փուլերը, որոնք, ի դեպ, դարձյալ քաղաքի պատմական կարևոր իրադարձությունների հետ էին կապվում: Այս ամենը ընթերցողին դյուրընկալելի է, մասնավորապես, շարադրանքին ուղեկցող ճշգրիտ, ու ամենայն մանրամասնությամբ մշակված ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի գծագրերից (գծ. 21, էջ 75):

Մենագրության մեջ փոխեփոխ իրար են հաջորդում Դվինի այլ հոգևոր շինությունները: Կարծում ենք, 1961 թ. միջնաբերդի գագաթին բացված եռանավ շինությունը, որի ֆունկցիոնալ նշանակության վերաբերյալ տարակարծություններ կան, արժանի է առանձնակի ուշադրության: Պրոֆ. Կարո Ղաֆադարյանը իր ընդունելի կռվաններն ուներ շինությունը քաղաքի հիմնադիր՝ Խոսրով Կոտակի պալատը համարելու համար: 1987 թ. կառույցը կրկին հետազոտելուց հետո Ա. Քալանթարյանն ու Կորյուն Ղաֆադարյանը մշակեցին մի այլ տեսակետ, համաձայն որի այն IV դարում սիրիական ճարտարապետության ոճով կառուցված Հայաստանի վաղ եկեղեցիներից մեկը պիտի համարել: Թերևս խնդիրը վիճա-

հարույց է, բայց նորարարությունը խորհել է տալիս հայ ճարտարապետության գողտրիկ այս հուշարձանի ֆունկցիոնալ նշանակության մասին (գծ. 17, էջ 64):

Հետագա շարադրանքում արծարծվում են քաղաքի պաշտպանական համակարգի մանրամասները (էջ 57), ժամանակային առումով տարբեր փուլերում իրականացված նորոգումներն ու փոփոխությունները: Չնայած ժամանակի ընթացքում կրած խաթարումներին, միջնաբերդի գագաթին քաղաքի ապահովության նպատակներին ծառայող առաջին պարսպապատի ուրվագիծը բավականին հստակ է ներկայացված: Երկրորդ պաշտպանական գիծը նկարագրելիս հեղինակը հիշատակում է պարսպապատի հուսալիությունն ապահովող որոշակի հեռավորությամբ դասավորված բուրգերը, որոնցից մեկը (հարավայինը) պեղումների շնորհիվ մանրակրկիտ հետազոտության է ենթարկվել (աղ. 22, նկ. 2): Մենագրության մեջ վկայակոչված են քաղաքը շրջրոլորող պարսպի հետքերը, առանձին հատվածներում կանխամտածված չորս դարպասների տեղադրությունը և քաղաքի տարբեր հատվածների հաղորդակցությանը նպաստող կամուրջների առկայությունը:

Դժբախտաբար, Դվինի պաշտպանական համակարդի ուսումնասիրությունը սպառիչ լինել չէր կարող, հենց թեկուզ լայնամասշտաբ պեղումների բացակայության պատճառով: Այնուհանդերձ, խնդրի լուծումը Քալանթարյանը իրականացրել է իր իսկ տրամադրության տակ եղած հետախուզական բոլոր աշխատանքների արդյունքների և պատմական աղբյուրների տեղեկությունների օգնությամբ:

Տարերային աղետները՝ երկրաշարժերը, և թշնամու հարափոփոխ արշավանքները հիմնավորապես վնասել են հուշարձանը: Միայն հնագետների (Ֆ. Բաբայան, Ն. Հակոբյան, Գ. Քոչարյան, Ա. Ժամկոչյան) բարեխիղճ պեղումներով Դվինի տակնուվրա, խառնաշփոթ շերտերից ուրվագծվեցին պատմական տարբեր ժամանակահատվածների շինությունների կառուցողական սկզբունքները, վերանորոգման փուլերը և, վերջապես, Դվինի քաղաքաշինության մակարդակն արտացոլող առանձնահատկությունները: Մենագրության մեջ մեծ աշխատանք է տարվել միջնաբերդի արևմտյան հատվածի բնակելի համալիրների հատակագիծը, հարավային բուրգի անմիջական հարևանությամբ բացված և պատմական տարբեր փուլերում (V–VII դդ.) մի քանի վերանորոգումներ ապրած հսկայածավալ շինության մանրամասները ներկայացնելու տեսակետից: Եթե այս բոլորին ավելացնենք գրքում զետեղված բազմաթիվ խոսուն, վավերական նշանակություն ներկայացնող բնակելի շինությունների լուսանկարները, ապա միանգամայն հստակ կդառնա Դվինի քաղաքաշինության յուրահատուկ պատկերը: Բաժնի վերջում հակիրճ ներկայացված են քաղաքի շինարարական ութ փուլերը:

Դվինի նման բարդ հուշարձանի շերտագրությունը ներկայացնելու անդրանիկ փորձը Ա. Քալանթարյանինն է (էջ 35–55): Մինչ այս աշխատանքը նա գիտական շրջանակներին ծանոթ էր այդ մասին իր դրած մի շարք գործերով: Սակայն 1973 թ. հետո ամենամյա պեղումների արդյունքներով հուշարձանի տարբեր պեղահատվածների շինարարական հորիզոններն ու բնակեցման փուլերը պարզաբանելու տեսակետից նոր լրացումներ կատարվեցին: Դա վերաբերում է հատկապես կենտրոնական թաղամասում V–VII դդ. կառուցված հոգևոր (միանավ, եռանավ եկեղեցիներին, կաթողիկոսական պալատներին) և աշխարհիկ շինություններին, որոնց ուսումնասիրությունը աշխատանքում կատարված է հնագիտական նյութերի ամբողջությամբ:

Մեծ աշխատանք է տարված Դվինի միջնաբերդի շերտագրությունը ներկայացնելու ուղղությամբ: Եթե խոսելու լինենք գրքում պայմանականորեն «ավազան» կոչված պեղահատվածի շրջակայքի եռանավ շինության սահմաններում հայտնաբերված հարուստ նյութերի վերլուծության մասին, ապա միանգամայն ակնհայտ է դառնում միջնաբերդի այդ հատվածների վաղմիջնադարյան և անտիկ շրջանի շերտագրության հաջորդականությունը:

Փաստական նյութերի ծավալուն հետազոտությունը հեղինակին հնարավորու-

թյուն է տվել բացահայտելու Դվինում արաբական տիրապետության խառնակ ժամանակաշրջանի շինարարական գործունեության հետևանքով միջնաբերդի վաղմիջնադարյան և անտիկ մշակութային արժեքների կորստյան հարցը:

Դվինի միջնաբերդի վաղմիջնադարյան շերտագրության խնդիրները լուծելիս Ա. Քալանթարյանը կառույցներն ու որոշակի թվագրություն (V–VII դդ.) կրող նյութական արժեքները (կղմինդրներ, կնքադրոշմներ, ս. Անդրեասի մեռոնանոթը, ոսկերչի արհեստանոցի տարբեր պարագաները) ուսումնասիրել է մի անբողջական համակարգի սահմանում:

Հուշարձանի այլ պեղահատվածների շերտագրական պատկերը ներկայացնելու համար կառուցվածքային նույն սկզբունքն է կիրառվել: Այսպես օրինակ՝ հարավային բուրգի անմիջական հարևանությամբ V դարում կառուցված հսկայածավալ հասարակական շինության հետազոտության շնորհիվ նա պարզում է V դարում կառուցված շինության վերանորոգման փուլերը, 893 թ. երկրաշարժից փլվելու հանդամանքները և հետագայում (X դարում) հարթեցված տարածքում նախկին շինությանը խորթ բնակելի համալիրների հայտնվելը:

Դվինի պեղումներով բացված այլ շինությունների (միջնաբերդի արևմտյան հատվածում և ստորին բերդում) շերտագրական առանձնահատկությունները գրքում դարձյալ վստահելի կռվաններով են արտացոլված:

Պատմական բոլոր դարաշրջաններում Դվինի դերը միջազգային առևտրում մեծ է եղել: Միանգամայն հասկանալի է միջնադարյան մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվողների հետաքրքրությունների շրջանակներում տվյալ պրոբլեմի զբաղեցրած տեղը:

Գրախոսվող աշխատանքում բացահայտված է նաև Դվինի առևտրական հարաբերությունների պատկերը: Հուշարձանի տարածքից հայտնաբերված ժամանակագրական տարբեր փուլերի տարաբնույթ նյութերը (խեցեղեն, ապակի, մետաղ և այլն) վերլուծելով ըստ քանակական և որակական հատկանիշների, նկատի առնելով քաղաքական տարբեր իրավիճակներում ճանապարհների շեղումներն ու առևտրական գործարքների մասշտաբները, մեր առջև ուրվագծվում է Դվինի զբաղեցրած տեղը Մերձավոր Արևելքի առևտրի ընդհանուր միջավայրում:

Ուսումնասիրության լավագույն հատվածներից մեկը կնքադրոշմներին նվիրված բաժինն է (էջ 97–115): Ի դեպ, միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բազմազան կողմերը լուսաբանող, աղբյուրագիտական բացառիկ արժեք ներկայացնող Դվինի կնքադրոշմների ժողովածուն տարիներ առաջ հրապարակվել է հեղինակի մի մենագրությամբ, որն, ինքնին, մասնավոր գրախոսության նյութ է: Ա. Քալանթարյանը խնդրո առարկան ուսումնասիրել է կիրառության բոլոր պարագաներում՝ առևտուր, իրավունք, ինքնություն հաստատող վավերագրական փաստարկ և այլն:

Խիստ տարողունակ, բազմաճյուղ ընդգրկումներով լեցուն այս թեման սույն գրախոսության մեջ մանրամասնելն անհնար է: Միայն հիշատակենք, որ նեղ մասնագիտական պատրաստություն պահանջող այս նյութի ուսումնասիրությունը հեղինակի կողմից կատարված է բարձր մակարդակով, ցուցաբերելով հնագետի, պատմաբանի և արվեստագետի բարեխիղճ մոտեցում:

Գրքում մեծ տեղ է հատկացված Դվինի բնակչության հիմնական զբաղմունքներին՝ արհեստներին, որոնք ամփոփված են երեք մեծ և օժանդակ ենթաբաժիններով հարուստ գլուխներում (VI, VII, VIII): Բազուս տարիների ընթացքում կուտակված և արդեն հետազոտված նյութերի մասին հրապարակված աշխատանքները գնահատելուց բացի, հեղինակն ուսումնասիրության մեջ համակարգման նոր սկզբունքներ է մշակել: Այդ առումով արժե գոնե Դվինի տեղական ապակու արտադրության խնդրին անդրադառնալ, որը ժամանակին, ընդհանուր հիմունքներով համակարգված էր: Գրախոսվող աշխատանքում առաջին անգամ կիրառվել է ապակու հետազոտության քիմիական անալիզների սկզբունքը և արդ-

յունքում ներկայացվել է երեք կայուն աղյուսակ. 1) VII դարի ապակին՝ կենտրոնական թաղամասում, 2) IX–XIII դդ. ապակին և 3) ներմուծված ապակին: Ապակու քիմիական անալիզների հստակ պատկերով լուծվել է Դվինի արհեստային արտադրության ամենակարևոր պրոբլեմներից մեկը՝ տեղական և ներմուծած ապակու որակական հատկանիշներն ու էական բաղադրամասերի տարբերությունները:

Սակայն աշխատանքում կան մասնակի բնույթի թերություններ: Այսպես. մատենագիտության ցանկից բացակայում է իր իսկ հեղինակությամբ հրատարակված կոլեկտիվ մի կարևոր հոդված[2], որը Դվինի սասանյան ժամանակաշրջանի մշակութային կյանքն արտացոլող կարևոր հրապարակում է: Գուցե թե հնարավոր էր նաև խուսափել շերտագրության և ճարտարապետության բաժիններում քաղաքական պատմության հաճախ հանդիպող կրկնություններից: Այսուհանդերձ, կարևորն այն է, որ ասպարեզ է հանված մեծարժեք մի աշխատանք, որն իր հաստատուն տեղը կունենա հայագիտության անդաստանում:

Ա. Քալանթարյանի աշխատանքի ֆրանսերեն թարգմանությունը ունի նաև այն առավելությունը, որ օտար մասնագետներին իրազեկ է պահում Դվինի և հայ ժողովրդի պատմության կարևորագույն խնդիրներին:

Ա. Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ

2 A. Kalantarian, N. Hagopian, A. Djamgocian, K. Ghafadarian. Armenische und Sasanidische Bautatigket in Dvin. –Archaeologische Mitteilungen aus Iran. Bd. 25, Berlin, 1992. S. 219-233.